

**ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի  
շնորհավորական ուղերձը՝ Ուսանողների միջազգային օրվա առթիվ**

Միրելի ուսանողներ,

Իմ ջերմ շնորհավորանքներն եմ հղում ձեզ՝ Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ:

Ցանկացած պետության զարգացման ու հասարակական առաջընթացին, գրեթե բոլոր բնագավառներում, իր ակտիվ մասնակցությունն ու արժանի ներդրումն ունի ուսանողությունը. վստահաբար կարող ենք ասել՝ այդպես է նաև մեզ մոտ:

Այսօր, մեր հանրային կյանքում չկա որևէ ոլորտ՝ մշակույթ, կրթություն, գիտություն, սպորտ, ձեռներեցություն, կառավարում և այլն, որտեղ առկա խնդիրներն ու հիմնահարցերն այս կամ այն կերպ չառնչվեն ուսանողության հետ կամ չհուզեն նրան:

Հանդիսանալով բազմադարյա մեր պատմության ընթացքում ստեղծված, սերնդեսերունդ փոխանցված մնայուն արժեքների կրողը, հասարակության շարժիչ ուժը՝ այսօր ձեզ է վերապահված մեր երկրի կայուն զարգացման և ազատ, հզոր ու ժողովրդավարական պետության կառուցման առաջամարտիկի առաքելությունը:

Մեկ անգամ ևս շնորհավորելով Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ՝ ցանկանում եմ, որ առավել պատասխանատվությամբ մասնակցեք մեր երկրի ու մեր մարզի գիտակրթական ու հասարակական գործընթացներին և ձեզ բնորոշ լավատեսությամբ ու եռանդով համախմբեք ոչ միայն երիտասարդությանը, այլև ողջ հասարակությանը:

Լավագույն բարեմաղթանքներով՝

**ՀՀ Սյունիքի մարզպետ**

 **Ս. Խաչատրյան**

17 նոյեմբերի 2011թ.